

ինչպարզած իւ.

3155

Դաշտ

891. 99 5
Դ-28

Բիգիկ
1914

Հ 1403

430

Տ 1403
35

Ա Զ Ե Ս Ո Ւ Թ Ա Ր Ե Վ Ե Ա Ն

Զ Ա Ն Գ Ի

Ե Ր Կ Ո Ւ Խ Պ Ա Տ Ա Կ Ե Ր Ո Ւ Վ



891.995
Խ-28

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան «Հ Պ Ո Ւ Ն Ա» Մուղեյսի պետական համալիր, № 8

1914

2003

891.390-93

1403 Հ.

Խ - 28

ԽԵՎՏՈՒՐ ԽԵՎՏՈՒՐԻ

ՎՀ Հայոցի և Թուրքի լուրջառութեան
29-Խ1-13

ԶԱԴԳԻ

100
1961
Գ

ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐՈՒԴ



ԹԻՑԼԻԶ
Տպարան «ՀՊՕՂՆ» Մուշեղյակի պեղութ. № 8
1914

Ծերունի Ներսէսը հաստ փայտիս դիմ-
հար տալով՝ ծանրաբայլ գուրս եկաւ տնից՝
շըջագայելու մօտիկ փողոցները՝ թարմա-
նալու համար։ Նրա առջեկից զնում էր իր
վաղեմի սիրելի շունը։

Ծերունին ապրում էր բոլորովին մենակ իր շանը հետ Ոչ մի աղքական, բնկեր, բարեկամ նա չունէր:

Տիտղոսը էր անցնում ծերունի Ներսիսի
կեանքը:

Ժամանակով զրագիր էր. ունէր տղւն..
տեղ, ամուսին, զաւակներ և լաւ ապրուստ:
Իսկ այժմը, այժմ ծերացած, պաշտօնա-
զուրկ, զրկուած ամեն տեսակ բարիքից:
Ատանում էր նա ազբատիկ կենսաթոշակ,
այնքան քիչ, որ հազիւ էր բաւարարում ի-
րեն ամենակարեսը պէտքերը հոգալու:

Ներսէսն իր շանը հետ ապրում էր մի փոքրիկ սենեակում։ Հարևաններն էին պառաւ տանտիրուհին և մի այրի դերձակուհի իր գեռահաս աղջկայ հետ։ Սրանք էին ծերունու զբոյցընկերներն երբեմնակի, երբ նա սրտնեղում էր առանձնասենեակի չորս պատի մէջ։

Զմեռն էր։ Երկար գիշերներ։ Ժամը չորսից ճրագները վառւում էին։ Հարևաններն էլ էին վառեր. իսկ ծերունի Ներսէսը գեռ երկար պիտի նստէր մթութեան մէջ։ Նա խնայողութեամբ էր բանեցնում վառելանաւթը։

Այդպիսի ժամերին ծերունին պառկում էր բազմոցի վրայ, մտքով տարւում հեռու անցեալը... Հետզհետէ միան էին գալիս կինը, զաւակները... Երկու աղջիկը մեռան գեռ մանուկ հասակում։ Նրանց յետելից կինն էլ գնաց, մնաց մի հատիկ Սուրէն զաւակը—իր միակ յոյսը։ Ծերունին ինչպէս էր սւսում այդ մանկան վրայ...։

Երեխան մեծացաւ. դպրոց էր գնում։

Ապրում էին երկով սիրալիր։ Օրերն անցնում էին աննկատելի։

Յանկարծ, բոլորովին անսպասելի, Սուրէնը հիւանդացաւ։ Մրսել էր։ Բժշկների գեղերը չօգնեցին։ Զէ անցնում երկու շաբաթ, Սուրէնն այլ ևս չկար...

— Թշուանու եմ ես, թշուառ, հեծկըլտաց ծերունի Ներսէսը գառնագին։ Նա շուռ եկաւ միւս կողքի վրայ։ Այդ վայրկեանին ծերունու գիրկն ընկաւ շունն և սկսաւ լիզել նրա երեսվար գլորւող արցունքի կաթիները։

— Զանգի, էդ դռւ ես սիրելիս, իմ մենակութեան ընկեր Զանգի։

Բոնեց ծերունին շան վզից և մօտեցրեց շան դունչն իր երեսին։

— Մխիթարնում ես ինձ, Զանգի, դռւ սիրելիս... Զէ, էն տեսակ խոր կակիծը չեմ կարող մոռանալ... Սուրէնի մահուան մըրամուռը չի կարող սրտիցս գուրս գալ։

Շունը մեղմօրէն վսփում էր, աւելի էր կպչում ծերունուն, լիզում էր նրա ձեռները, երեսն և պոչը խաղացնում։

— Յիշում ես Զանգի, յիշում ես, այն, տեսնում եմ որ յիշում ես...։

Ծերունին լոեց... Արցունքի խոշոր կաթիները թափւում էին Զանգիի մարմնի վրայ։

Նա մտարերեց այն օրը, երբ Սուրէնը դըմից բերաւ մի նիհար ու գզզուած փոքրիկ շուն։

Ո՞հ, ինչպէս էր սիրում Սուրէնն իր գտած շանն և ինչ տեսակ խնամում նրան... Երբ Սուրէնը հիւանդացաւ, Զանգին չէր

հեռանում Սուրէնի մօտից՝ կուչ գալով
մտնում էր նրա ոտների միջև։ Մեռաւ
Սուրէնը, Զանդին անհանգիստ կոնձկոնձում
էր և մի գլուխ վազվզում...


Այդ օրից անցել էին շատ տարիներ։
Մոռանալ, ցըել իր վիշտը՝ ծերունին անզօր
էր. կորուստն անփոխարինելի էր. հոգեկան
վէրքը խոր ու ծանր։

Ապրում էր այժմ Զանդիի հետ միայ-
նակ. Ծերունու միակ սփոփիչը Զանդին էր
— սիրելի Սուրէն որդու յիշատակը. Զանդիի
հետ էր նա բաժանում իր աղքատիկ ճաշը։
Իսկ երբ ծերունի Ներսէսը խօսում էր
Զանդիի հետ, շուննայնքան ըմբռնողաբար
էր նայում տիրոջ աշքերի մէջ, որ կարծես
ուզում էր պատասխանել նրա հարցերին։

Այսպէս էին վլորւում ծերունու զառ-
նացած վերջին օրերը։

II

Զմեռուայ երկար գիշերներից յետոյ
ցերեկները թէ և սկսել էին երկարիլ, բայց
արեի ճառագայթները դեռ ևս անզօր էին
երկիրը տաքացնելու. Օդը ցուրտ էր. Զիւ-
նի հաստ շերտը բռնել էր երկրի երեսն և



Հայրիկ Զանդի շնիկն լու մորիկ տուրու»

Նրա որսուռ հատիկները գոյնզգոյն ակնե-
դէնների նման պսպղին էին տալիս արևի
ճառագայթների տակ:

Խըճիթի ծածկուած դուռն ճռուալով
բացուեց և սրտապատառ դուրս պրծաւ
Զանգին. Նրա յետևից էլ ծերունին: Նա
վրայ բերեց խալաթի փէշերն ու ցըտից
կուչ եկաւ:

Ամեն օր ծերունին ըստ սովորութեան
դուրս էր թողնում շանը կարճ ժամանա-
կով զբունելու.

— Քնա, Զանգի, գնա դուրս, մի քիչ
թարմացիր: Գիտեմ, դու չես կորչիլ: Եղա-
նակը թէն ցուրտ է, բայց առողջարար:

Շունը խաղացնելով պոչը՝ սկսեց պտոյտ-
ներ անել, վազվակել: Ծերունին կանգնած
դրութեամբ ցուրտ զգալով՝ ներս մտաւ
սենեակը. քիչ յետոյ սրտնեղելով մինակու-
թիւնից՝ դուրս եկաւ շանը կանչելու.

— Զանգի, Զանգի, — ձայն տուաւ նա
շանը. իսկ շունը չկար ու չկար: — Ախ, դու
անպիտան: Շատ կարելի է փողոցն է դուրս
եկել:

Ներսէսը դիմեց դռնակի կողմը.

— Զանգի, Զանգի, — կրկնեց նորից՝
դուրս հանելով զլուխը:

Փողոցում շունը չերևաց:

— Այ, քեզ զարմանք, — շշնջաց ներսէ.

սը, — որտեղ պահուեցաւ: Հաւանական է որ
հարևան ջների հետ զնացած լինի:

Ծերունին գարձաւ սենեակը, հագաւ
վերարկուն, դուրս եկաւ փողոց: Ման ե-
կաւ մօտիկ բոլոր տեղերը: Մի քանի ան-
գամ ետ եկաւ տուն, հարցյրեց հարևաննե-
րին՝ չկար ու չկար:

Մէկ ամբողջ օր կողցը ծերունին ման
գալու վրայ: Ուտել-խմել մոռացաւ. Միայն
ուշ երեկոյեան վերագարձաւ նա տուն
տիրապէմ, զիսակոր, մոլորուած:

Բակում նրան պատահեց հարևանի աղ-
յիկը: —

— Իմ Զանգին կորաւ, — խղճալի ձայնով
կանչում էր ծերունի ներսէսը:

Աղջիկը լսեց կարեկցաբար և յայտնեց
իր տեսածը: —

— Ախը, ես առաւօտ Զանգիին տեսայ.
Նա ուրախ-ուրախ պոչը խաղացնելով փո-
ղոց վազեց, անցաւ մի քանի քայլ ու կրկին
ետ եկաւ: Մի՞թէ նա այստեղ չէ: Շատ կա-
րելի է նրան գողացել են:

— Պառաւած, հասարակ տեսակի շուն
էր. ում կարող էր նա պէտք գալ: Միայն
իբրև Սուրէնիս յիշատակ, իբրև մենակու-
թեանս ընկեր, ինձ համար թանկագին էր
և ոչ մի շան հետ ես նրան չէի փոխիլ:

Ծերունին մտաւ իր բնակարանը:

Սենեակը նրան դադարի ու մռայլ
թւաց: Նա թէհ պառկեց բազմոցի վրայ,
բայց բունը չտարաւ: Շունչը կտրած ջղաձը-
գաբար ականջ էր գնում ամենաթեթև ոտնա-
ձայնին անգամ: Երբեմն նրան թւում էր՝ թէ
մէկը դուռն քշփորում է խսկ այնպէս, ինչ-
պէս անում էր Զանգին: Անգիտակցաբար
բաց էր անում գուռն, կանչում «Զանգի»,
բայց Զանգին չկար ու չկար: Մտամոլոր
ծերունին շտապում էր բակը, բաց անում
դունակը, զարձեալ յուսախաբութիւն: Փո-
փոցը դադարի ու խաղաղ: Կոտրուած սրտով
ծերունին վերադառնում էր բնակարանը:
Մրտի ալեկոդութեամբ ու յուզմունքով
անցկացրեց նա այդ գիշերը: Քունը բոլո-
րովին մօտ չեկաւ նրա աչքերին: Հուսա-
բացին վրան առաւ վերաբկուն ու դուրս
եկաւ կրկին որոնելու:

III

Անցաւ երեք օր: Ճանր օրեր Զուր էր
նա ման գալիս Զանգին գտնելու, զուր էր
նա ողջ գիշերներ արթուն լուսացնում
մթան մէջ և ականջը ձայնի պահում:

Շատ էլ ու զում էր չժամփառել, անբուն

չմնալ և չյուզուել, բայց որ չէր կարողա-
նում: Հեշտ էր ասել մի մտածիր... Մի հա-
սարակ շան հետ անգամ ապրելու բազե
շունեցաւ անբաղդ ծերունին...

Այսպիսի ծանր ապաւորութեան տակ
էր ծերունին, երբ ներս մտաւ հարեանի
աղջիկը: —

—Պապի, ինչպէս տեսնում եմ շատ ես
մտածում, — ծերունուն տիսուր տեսնելով
մեղմաբար նկատեց օրիորդը: —Դիտե՞ս՝ այս
բոպէիս ի՞նչ լսեցի: Պատմում են, որ շընող
շնորսները Զանգին ցանցով բռնել են և
հաւանական է որ տարած լինին սպանգա-
նոցը, ուր առհասարակ բռնած շներին մի
քանի օր պահում են: Եթէ տէր է գուրս
գալիս, խօ վերտղարձնում են, խսկ եթէ չի
յայտնում տէրը, խեղդում են: Պիտի գնար
այնտեղ ստուգելու:

Ծերունին հենց որ սպանդանոց լսեց,
էլ բոպէ չկորցրեց: հազար վերաբկուն, ճա-
նապարհ ընկաւ: —

—Գնամ քանի գեռ չեն խեղդել:

IV

Ծերունի Ներսէսն ահազին ճանապարհ ունէր անցնելու. Մութն իջել էր արդէն, երբ մեծ նեղութիւններով հազիւ կարողացաւ սպանդանոցը համնել.

Սպանդանոցը մի ասանձնացրած շնութիւն էր, որի մեծ դռան մօտ կանգնած էր գիշերապահը.

— Բարի երեկոյ, որդի:

— Աստծու բարին, բիծա, ի՞նչ ես ուզում:

— Ես է եարաք էն շինութիւնը, ուր բերում են փողոցներից հաւաքած շներին:

— Հրամանք ես, սա է. թիչ էլ առաջ գնա, զանգը քաշիր, դուրս կգայ մէկ ուրիշ մարդ, նրան հարցրու.

Ծերունին մօտեցաւ ցոյց տուած դռանը, զանգահարեց, դուրս եկաւ մի մարդ՝ ձեռին ձրագը:

— Ի՞նչ ես ուզում, — ուշագիր զննելով ծերունու պատկերը ոտից մինչև գլուխը:

— Ես եկել եմ իմանալու՝ այստեղ է եարաք մեր կորցրած շունը:

Օրուայ էս ժամանակը, էն էլ մթնագիշեր, ի՞նչ է պատահել քեզ. էլ չի լուսանալու, չէիր կարող ցերեկով գալ. երկի

շունն ազնիւ տեսակից է, որ քո պարոն տէրերի քունը չի տարել և էսպէս անժամանակ քեզ ուղարկել են:

— Ես եմ տէրը, որդի, հեռու տեղից եմ գալիս, լուսով եմ դուրս եկել. քաղաքից դուրս ճամբէն շատ վատ էր և ցեխոտ, մեծ դժուարութիւններ կրելով հազիւ եմ կարողացել համնել. ես էլ, ինչպէս տեսնում ես, ուժից ընկած, ծերացած մարդ եմ:

— Դէհ որ էղիսի նեղութիւններով եկել ես, զնա այն ծածկոցի տակ, ես իսկոյն ճրագով կգամ:

Ծերունին զնաց ցոյց տուած տեղը: Պահապանը ճրագով երեաց: Անցան երկար ծածկոցի տակով, որի երկարութեամբ վանդակների մէջ փականքներով լցուած էին ամեն տեսակի շներ, որոնք տեսնելով պահապանին և ծերունուն, սկսան աղիողորմ կաղկանձել և ոռնալ:

Օդը ծանր էր և խեղգող:

Ծերունի Ներսէսը դիտեց բոլոր վանդակները, տեսաւ բոլոր շներին, սակայն Զանգին նրանց մէջ չէր:

Պահապանը ծերունուն առաջնորդեց մէկ ուրիշ շինութիւն ևս.

Այստեղ էլ մօտեցաւ վանդակներին, աչքի անցկացրեց բոլոր շներին. սրանց մէջ էլ չերեաց: Յետոյ միտք արաւ՝ շատ կա-

Քեղի է աչքաթող արած լինիմ, արի ձայն
տամ, Զանգին ձայնս ճանաչում է: Երեք
անգամ «Զանգի» կանչեց, դարձեալ զուր,
չկար ու չկար:

Միայն վերադարձին, երբ ուզում էին
շինութիւնից դուրս գալ, առաջներին, ան-
կիւնում, ճրագի լոյսի տակ, շների կաշի-
ներ նշմարեց, ծերունու սիրուը վայրկենա-
պէս վկայեց՝ արի տես, թէ Զանգիիս խեղ-
դած շլինին և կաշին հանած:


Պահապանի հետ մօտ գնացին, վրայից
վերկալան մէկ երկու կաշի, վրայ երրորդը
վերցնելիս՝ ծերունին ճանաչեց իր Զանգիի
կաշին...

— Էս է որ կայ, ապա ես ի՞նչ ասացի,
Էս ի՞նչ տեսայ:

Ծերունի ներսիսի ծնկները ծալուեցին,
անզգայ ընկնում էր երեսի վրայ, եթէ
պահապանը թեփ չբռնէր:

Ծերունին այլայլուեց, սկսեց դառնա-
գին մըմնջալ —

— Ին ո՞ր անիրաւ ձեռն է դիպել Սու-
րէնիս թողած յիշատակին և չի խնայել
ծերութեանս վերջին օրերին: Էս տեսակ
էլ բաղդ: Եարաք ինձ պէս էլ անբաղդ ոք-
մին եկած կլինի էս անիրաւ աշխարհը, թէ
հէնց ես եմ. շունն ի՞նչ մի մաթահ բան է,
որ նրա հետ էլ ապրելու բաղդ չունեցայ:



Վահագին, էս լինչ տեսայ:

Էս ԲՌԱ տեսակ աստղի տակ եմ ծնուել:

ԶԵ, սրանից ետ օրերս հաշւած են, երկար չի քաշիլ. կերթամ, կերթամ Սուրէնիս կպտնեմ էն սառն, անարև գետնի մէջ, էն սև հողի տակ, կզրկենք իրար, կողք կողքի կտանք, կհանգստանանք. գոնէ ընդ միշտ կազատուինք էս անմիխթար, դարդ ու վարամ աշխարհից:

Արցունքները միրուքի վրայ գլորուելով, փայտի վրայ յենուելով՝ սիրտը կոտրած յետ զարձաւ ծերունի Ներսէսը, որ գնայ, անդառնալի գնայ իր Սուրէնին գանելու...



— @@ —

3155

Վաճառության և նոյն հեղինակի՝

- | | |
|---|-------|
| 1. Եալօնիս | 3 կ. |
| 2. Ծիծառաբեր, պատկերազարդ, 200-ի չափ ընտիր, զուարձախոսութիւն — անեկզոտներ, երկրորդ տպագր. բարեփոխած | 30 կ. |
| 3. Ծննդեան ընծայ, մէկ պատկերով, երկրորդ տպագր. բարեփոխած | 5 կ. |
| 4. Զանգի, երկու պատկերով | 5 կ. |

Գիշեան է 5 կլողիկ.

0007328

Վերի յիշուած զրբոյկների պահեատը մեզ մօտ է. զումարով գնողներին մեծ զեղջ. Ցանկացողները կարող են դիմել ամեն ժամանակ մեր մշտական հասցեով՝ Տիֆլիս, Լիսոգորսկի ուղարկության Հագուստ Խաչառյան։

Շախուռած են նոյնպէս ամեն տեղերի զրավաճառների մօտ։

2013



